

Պատմական Իրանը եւ Հայաստանը

ՄՐՈՐՈՒՄ ՀԱՍՐԱԹԵԱՆ

Պատմութեանը քաջ յայտնի Հայկական Լեոնաշխարհը՝ այսինքն հին Հայաստանի աշխարհադրական ամբողջութիւնը, իր դիրքի շնորհիւ, առաւել քան Պաղեստինը, Փիւնիկէն, Սիրիան, աշխարհի այն բացառիկ երկրներից է, որ աւելի քան երեսուն դարերի ընթացքում շուրջ վաթսուան անդամ ենթարկուել է մեծ ու միջակ արշաւանքների։ Նուազագոյնը նոյնքան անդամ ենթարկուել է աւելի փոքր, անցողիկ արշաւանքների եւ դրանից աւելին՝ զանազան ներքին ու արտաքին պատերազմների։ Ըստ որում, այդպէս էլ եղել է վաղադոյն ցեղատիրական դարաշրջաններում։ Ասորեստանեան եւ սկիւթկիմմերական ներխուժումներից պակաս չէին հելլենիզմի եւ վաղ ֆէոտալիզմի, միջնադարի եւ ուշ միջնադարի, մինչեւ իսկ նորագոյն շրջանների արշաւանքներն ու պատերազմները, որոնց ընթացքում տորուում էր երկիրը՝ իր բնակչութեամբ։ Բաւական է յիշել, որ 1340-ից մինչեւ 1640-ական թուականները ձգուող 300 տարիներից 230-ը եղել են անընդհատ պատերազմների, աւերումների տարիներ, իսկ մնացած 70-ը՝ սովի, համաճարակների, արտագաղթների, դերեվարութիւնների, անտանելի հարստահարութիւնների տարիներ։

Հայկական Լեոնաշխարհի բնակչութիւնը, իր ճնշող մեծամասնութեամբ, մինչեւ 12-րդ դարը, դրեթէ ամբողջապէս, յատկապէս դիւղում, բաղկացած է եղել հայերից։ Գերագանցողէն հայ բնակչութեան ջրտինքով, նրա արհեստով, մանաւանդ հացով ու ինչքով էին ապրում եւ կուում Հայկական Լեոնաշխարհ, Կասպիականի հարաւարեւմտեան աւազան եւ Ատրպատական թափանցած վաշկատուն կամ արդէն նստակեաց դարձող օտար ռազմարկուները։ Նրանք

որպէս քոչ ու ընտանիքով խուժած մեծ խմբեր, ամէն կերպ ջանում էին ամրանալ ալպեան արօտավայրերով ու ջրերով հարուստ Հայկական Լեռնաշխարհում եւ անմահ ձմեռանոց հանդիսացող շրջակայ վայրերում, որպիսիք, առաջին հերթին, օրինակ Ղարաբաղ-Մուղանի եւ Միլի դաշտերն էին: Հայկական Լեռնաշխարհը այդ քոչերի համար նպաստաւոր էր նաեւ իր անտառների աղքատութեամբ. անտառէն կարող թափանցել ոչխարը:

Մէկը միւսին թուլացնելու, ենթարկելու նպատակով, 11-16-րդ դարերում, այլեւ առ այլեւ, երկիր ներխուժած այդ ցեղերի բանակները նաեւ իրար էին յօշոտում: Նրանք շատ անգամ, նահանջների ընթացքում, նստակեաց հայ բնակչութեանը տեղահան էին անում, քլում հեռուները՝ իրենց իշխած երկրի այլ մարզերը, իրենց թշնամուն կենսական միջոցներից զրկելու նպատակով աւերում, հրկիզում էին բնակավայրերը: Նոյնիսկ ուշ միջնադարում հայ մարդկանց դերնվարում էին՝ վաճառքի նպատակով, իսկ փոքրիկ դիմադրութեան դէպքում՝ նաեւ կոտորում: Միւս կողմը՝ «որպէս վրէժ», իր թշնամու նման արարքի դէմ՝ իր յաջողութեան կամ նահանջի դէպքում, նոյնը կատարում էր թշնամու տիրապետած մասում, երբ ոտք էր դնում այնտեղ: Եւ այս երկուսի զոհերը մեծ մասամբ, իսկ երբեմն միայն, հայ բնակիչներն էին լինում՝ գլուղացի թէ քաղաքացի: Այդպէս էր մանաւանդ ողջ 14-16-րդ դարերում թուրքմենական եւ թուրք-պարսկական տեւական պատերազմների ընթացքում: Հայ նշանաւոր հեղինակներից մէկի թեւաւոր արտայայտութեամբ՝ այդ նոր տէրութիւնների լինելիութեան եւ նրանց էթնիք գոյութեան անիւր թաւալում էր հայ ժողովրդի կրծքավանդակի վրայ:

Սակայն չմոռանանք յիշել, որ այդ ցնցող, աւերիչ անցքերի արանքներում, ինչպէս հայրենի պետականութեան, այնպէս եւ օտար տիրապետութիւնների ժամանակ, եղել են եւ խաղաղ կեանքի, բայց մեծ մասամբ կարճատեւ, շրջաններ: Դիմենք աւելի ծանօթ խոր անցեալին: Դրանցից առաջինը, որ ունեցել է իր անհամեմատ խաղաղ շինարարական եւ պետական կեանքը, հանդիսացել է ուրարտական կոչուած Վանեան թագաւորութիւնը, իր երեք հարիւրամեայ պետականութեան առաջին երկու հարիւրամեակում (Ք. Ա. 820-620 թթ.): Ապա գալիս է Երուսնդեանների յաջորդ՝ Արտաշէսեան հայկական երկրորդ հարստութեան դէթ երկրի ներսում անհամեմատ խաղաղ հարիւր յիսունամեակը (Ք. Ա. 185-35 թթ.): Շուրջ չորս դար տեւած հայ Արշակունի վասալ հարստութեան եւ յաջորդած վաղ մարդապնդութեան ժամանակների կէսից աւելին (Ք. Ե. 60-450 թթ.), մարդապնդութեան եւ յաջորդ շրջանի (485-685 թթ.) երկու հարիւրամեակը, ապա՝ հայ Բագրատունիների մօտ երկու դար տեւած հա-

ընտուութեան ժամանակի (860-1060 թթ.) կէսը, եւ Հայկական Կիլիկեան իշխանութեան միջին մասը ընդգրկող երկու դարը (1100-1300 թթ.) :

Այսպիսով, հայոց պատմութեան երեսուն երեք յայտնի դարերի ընթացքում, միայն 1000 կամ 1200 տարիների ընթացքում էր, որ հայ ժողովուրդը ապրել է իր սեփական գլխարկի տակ : Այդ շուրջ երեք հազարամեակը ընդգրկող ժամանակաշրջանի աւելի քան մէկ երրորդ մասին են պատկանում հայ ժողովրդի տնտեսական եւ մշակութային բարձր զարգացման՝ նրա առաջընթացի նշանաւոր փուլերը : Մնացած երկու հազարամեակի ընթացքում Հայաստանը ապրել է պատերազմների եւ կարճատեւ ու երկարատեւ օտար տիրապետութիւնների ժամանակներ, ստեղծագործական սակաւ հնարաւորութեամբ, կամ եղածի կորուստով :

*
**

Օտար տիրապետութիւններից ամենատեսականը եւ ուշադրաւր Հայաստանի եւ հայերի համար հանդիսացել է Աքեմենեան, Պարթեական եւ Սասանեան Պարսկաստանի աւելի քան հազարամեայ տիրապետութիւնը : Յիշենք նաեւ յոյն-բիւզանդական 6-7 դար տեւած դերիշխանութիւնը, գերազանցօրէն՝ երկրի արեւմտեան մարզերում : Ապա ընդհանուր կարգով, որոշ հերթականութեամբ, նշենք Հայաստանի կեդրոնական եւ արեւելեան մասում արաբական շուրջ երկու դարի, մոնկոլ-թաթարական շուրջ մէկ ու կէս դարի տիրապետութեան ժամանակները : Յատուկ յիշելու է վերջապէս, սելճուկ-թուրքական, թուրքմենական, թուրք-օսմանեան եւ արեւելեան մասում պարսկական (թէեւ իրականում գրեթէ դարձեալ թուրքական) եօթից ութը դար տեւած աւերիչ ու ճակատագրական տիրապետութիւնների շրջանները :

Մշտապէս յիշելու արժանի է շատ մօտիկ անցեալում, Արեւելեան Հայաստանի ոչ ամբողջական մատում, Կայսերական Ռուսաստանի շուրջ մէկ դար տեւած տիրապետութիւնը, որի ընթացքում, հայ բնակիչը ռենցաւ հանգիստ քուն, ապահով երթեւեկութիւն, ապահով սեփականութեան եւ քաղաքացիական հաւասար իրաւունք : Այս ցանկից դուրս ենք թողնում ռոմէական տիրապետութիւնը, թէեւ փոքր ժամանակ չի տեւել, յատկապէս Հայաստանի արեւմտեան մասում, որովհետեւ կրել է աւելի շատ կարճատեւ բոյոթ իր դրական, մանաւանդ բացասական ազդեցութեամբ, առանց նշանակալից եւ վճռական հետեւանքների : Այդպէս էլ դնահատում ենք ինչպէս հնագոյն, այնպէս էլ ուշ շրջանների զանազան վաղանցիկ տիրապետու-

Թիւնները, բացառութեամբ վրացական շուրջ կէտդարեան քաղաքական ազդեցութիւնը, որ իրականում հանդիսանում էր հայ-վրացական պետական-դաշնակցային սկզբունքով դեկլարուող դաշինք: Սա վերին աստիճանի բարեբաւութիւն եւ շատ բացառիկ, բայց շատ կարճատեւ շրջան էր ողջ հայոց պատմութեան մէջ, երբ Հայկական Կիլիկիայի, նոյնպէս բացառիկ վերելքի այդ ժամանակներում, ծաղկում էր Զաքարեան Արեւելեան Հայաստանը՝ վրաց Բագրատունիների զօրեղ եւ շինիչ դաշինքի տակ:



Պատմութեան ընթացքում հայ ժողովրդի համար բոլոր տիրապետութիւնների ոչ միայն ամենից տանելին, ամենից շատ դրական ազդեցութիւն թողածը, այլեւ իր նշանակութեամբ, ըստ իս, զարմանալի կերպով նոյնիսկ ընդունելի, որպէս պատմական անհրաժեշտութիւն, դա պարս-իրանական տիրապետութիւնն է, նախ եւ առաջ հնագոյն ու հիմն պարսկականը, մասամբ եւ մօր պարսկական տիրապետութիւնը: Ի հարկէ, այս դնահատականը շատ տարօրինակ կը հնչի, մանաւանդ հայ մարդկանց ականջին, որովհետեւ հայ պատմագրութեան մէջ տակաւին դերիշխող է միջնադարեան պատմիչները, ժամանակագիրները եւ եկեղեցու ազդեցութիւնը, որ թափանցել է նոյնիսկ հայ նոր ու նորագոյն դրականութեան եւ պատմագրութեան մէջ: Ըստ այդ տեսակէտի, իրեւ թէ՛ Պարսկաստանը հնում, այլեւ 16-19րդ դարերում, եղել է հայ ժողովրդի, հայ երկրի նախ թիւ առաջին, ապա թիւ երկրորդ թշնամին: Այդ մի անարդար դնահատական է, որից պէտք է ի սպառ հրաժարուել, որովհետեւ այդ է պահանջում առարկայական դիտական պատմագրութիւնը եւ պատմական ճշմարտութիւնը:

Հայոց պատմութեան այս մասնաւոր առիթով գտնում ենք, որ ընդհանրապէս ժամանակն է, որպէսզի ինչպէս Հին աշխարհի, այնպէս էլ մարդկութեան պատմութեան մէջ, ըստ արժանւոյն, ազնուօրէն, համարձակ կերպով վերագնահատուի Աֆամեմհան Պարսկաստանի, կամ Կիւրոս-Դարեհեան՝ պարսից-արեւելեան հզօր կայսրութեան աւելի քան երկդարեան տիրապետութիւնը, որպէս անաշխ ու մեծագոյն բնագրկումով պետական-առաջադիմական քայլը՝ համամարդկային պատմութեան մէջ: Ժամանակն է բարձրաձայն ասել, որ Աքեմենեան պարսկական երկու դար տեւած տիրապետութիւնը շատ դրական դեր է խաղացել ոչ միայն Հայաստանի եւ հայ ժողովրդի համար, այլեւ ողջ Առաջաւոր Ասիայի, Հիւսիսային Հնդկաստանի եւ Միջին Ասիայի շատ երկրների, ժողովուրդների ու ցեղերի համար:

Միայն դուք, վերապահութիւն կարելի է՝ անել պարսկական տիրապետութեանը ենթարկուած եզիպտոսի եւ յունա-հելլենական մարզերի նկատմամբ, այն էլ միմիայն այդ դարերի համար:

Հին աշխարհի պատմութեան մէջ ցեղային առանձին վարչական միաւորումների համախմբումը, ինչպէս յայտնի է, սկսուեց նախ եզիպտոսում՝ Նեղոսի միջին եւ ստորին աւազանում, որ աւարտուեց մեզանից հինգ հազար տարի առաջ, չուրջ եօթ դար տեւող առանձին մարզերի-նոմերի միջեւ ծագած պայքարից յետոյ: Երկրորդը՝ Միջագետքում՝ Սարգոնի եւ նրա թոռ՝ Նարամսինի ջանքերով: Երրորդը՝ նոյնպէս Միջագետքում՝ Ուրի քաղաքապետութեան երրորդ հարստութեան ժամանակ: Զորորդը՝ Եգիպտոսի, նրա արիւնիկան ցամաքից ասիական ցամաք թափանցելու ժամանակներում՝ միջին եւ նոր թաղաւորութեան հզօրացման միջոցին: Կարելի է յիշել նաեւ յատկապէս Փոքր Ասիայի, Ասորիքի եւ Հիւսիսային Միջագետքի համար հեքիւրակամ տիրապետութիւնը եւ միջերկրական-եան ու սեւեռնիկան աւաղաններում հելլենական ազդեցութեան տարածումը: Վերջապէս հերթը դալին է Ք. Ա. 11-7-րդ դարերի եւ մասնաւորապէս 8-7-րդ դդ. ասուր-քարելիական ռազմաստրկատիրական դիշատիչ աշխարհակալ տէրութեան առաջին փորձին: Ժողովրդական առանձն ասում է — «անգոյնն էլ մի դոյն է»: Որքան էլ աւերիչ, կողոպտիչ, սպանիչ էր Ասորեստանի արեւելեան դաժան բռնապետութիւնը, այնուամենայնիւ նրան յաջողուեց ստեղծել Առաջաւոր Ասիայի եւ Հիւսիս-արեւելեան Ափրիկէի Ժողովուրդները եւ ցեղերի մի տեսակ խառնարան: Այդ ժամանակներում, յատկապէս 8-7-րդ դարերում, եզիպտական, փիւնիկեան, բաբելական եւ մասամբ խեթական բարձր մշակութային արժէքները, ինքնին, այսպէս ասած կամաւոր ձեւերով, աւելի զօրեղ չափով հաղորդակից եղան իրար եւ մէկ աստիճան բարձրացրին նաեւ մշակոյթով աւելի ուշացած ցեղերին:

Գերազանցօրէն Ասորեստանի հզօր կայսրութեան եւ նոր Բաբելոնի հին տիրոյթների, նրանց ձեռք բերած պետական փորձի դրական բաժնի վրայ էր, որ ստեղծուեց կրկնակի հզօր պարսկական կայսրութիւնը, իսկ վերջինիս դեմին ու փորձի վրայ ստեղծուեց յունա-մակեդոնական մեծ, աշխարհաշէն կայսրութիւնը: Ջրաշէնարարութեան, առեւտրի եւ փոխանակութեան, մասնաւոր ստրուկի եւ ինչքի համար մղուող պայքարի հետեւանքներով ստեղծուած այս միաւորումները, մարդկային դարաւոր փորձի փոխանակման եւ ստեղծագործութեան մեծ կոռուաններ դարձան, թէեւ բռնութեամբ եւ արիւնով, առանց որի դժուար էր այն ժամանակ նաեւ առաջաւորին հասնելը, բայց եւ այնպէս, յատկապէս վերջին այս երկու՝ պարս-

իրամեակամ եւ յուռնա-մակեղոնեակամ աշխարհակալութիւններէից իւրաքանչիւրը, մէկ, երկու քայլով առաջ մղեցին համամարդկային քաղաքակրթութիւնը:

Այն, ինչ չլաջողուեց ծանր ու դժգոհ ընդ տէր գերատէրչ Ասորեստանին, եւ լաւ էր որ չլաջողուեց, մէկ յիսունամեակ յետոյ յաջողուեց իրանական սարաշարթի նախկին ռազմիկ-անասնապահ, ձիապահ եւ մասամբ խաշնարած արի-իրամեան ցեղերին, նախ, մինչեւ այդ Ուրարտուին եւ Ասուր-Բարեկոնին երկար ժամանակ դրացի եղած եւ նրանցից մեծապէս ազդուած, զուտ իրամեան ցեղերից մէկին՝ մար-մեդերին:

Կիւրոս-Դարեհեան պարսից մեծ տէրութեան նախապատրաստումը սկսուեց դեռեւս մար Կիւքսարից (600-ական թուականներից) մօտ 26 դար մեզինց առաջ. ապա՝ պարս Կիւրոսից, եւ այս նշանաւոր վերջինից երեք տասնամեակ յետոյ բարձրացած Դարեհից: Պարսից Աքեմենեան մեծ իշխանական տոհմի զաւակ, վճռական ու եռանդուն այս ռազմիկ զօրապետը՝ Դարեհ Ա.-ը, մէկ Հնդկաստանում, 522-518 թթ.-ին, կարողացաւ ստեղծել մի հզօր կայսրութիւն, որի արեւելեան սահմանները սկսում էին Պամիրեան լեռների ստորոտներից եւ Ինդոսի հովտից, ձգւում դէպի արեւմուտք եւ հասնում մի կողմից Կովկասեան լեռնաշղթային եւ Դանուբի ստորին աւազանին, միւս կողմից Արարական թերակղզուն եւ Նեղոսի աւազանին: Ի հարկէ, ասել, թէ այս ամէնը պարտական էր միայն Դարեհի եւ նրա որդու՝ Գանբքսեսի ռազմա-ստրատեգիական հանձարին, չառ լինելով, կը լինէր եւ թերի: Չխտելով մեծ անհատների դերը, պէտք է յիշել որ նրանց յաջողութիւնը ընթանում էր դարաշրջանի ընդհանուր պահանջին զուգահեռ: Այդ ժամանակներում էր, երբ տոհմերի կեանքը արդէն մօտենում էր ցեղային «գլխարկի» տակ միաւորուելուն, որին խանգարում էին դրացի հզօր ցեղերը, երբ հասունացել էր նաեւ ցեղերի միաւորման եւ ժողովուրդ դառնալու ընթացքը, բայց մօտիկ ու հեռու դնուող հզօր ժողովուրդները, իրենց պետական ուժով, խանգարում էին եւ սրանց, արգելակելով այդ ընդհանուր զարգացող պատմական ընթացքը: Դեռ աւելին, աճած, զարգացած փոքր ու մեծ ժողովուրդները, պետութիւնները, իրենց փորձի կուտակման, քանակական ու հասարակական կեանքի աճման, ընդհանուր մշակոյթի բարձրացման հետ, վաղուց էր, ինչ կարիք ունէին նաեւ խաղաղ կեանքի, փոխանակութեան եւ դրան նպաստող ապահով ճանապարհների, միասնական չափ ու կշռի, բազմաթիւ մաքսերի վերացման, օրինականացած հարկային դրութեան, նոյնիսկ փոխանակային դրամական համարժէքի եւ սեփականութեան ապահովութեան: Սրանց կարիքն ու անհրաժեշտութիւնը դարձել էին հրամայական պահանջ,

որովհետեւ զարգացել էր արհեստը, տեղի ունեցել աշխատանքի հասարակական երկրորդ մեծ բաժանումը, զարգացել էր փոխանակութիւնը։ Պարզ ապրանքային փոխանակութիւնը ծանր բեռ էր դարձել և, կախուել արհեստի և առեւտրի պարանոցից։ Այդ ճգնաժամից դուրս գալու մեծապէս խանգարում էին դրեթէ վերջ չունեցող պատերազմները, ասպատակութիւնները, յափշտակութիւնները, դերեւարութիւնները, կողոպուտը և կողոպուտին հասնող հարկերն ու պարտքերը, ոչ պակաս նաեւ հին աշխարհի հիմքերը մշտապէս կրծող ու ցնցող պարտային ստրկութեան զարգացումն ու խորացումը։ Ընդարձակ Արեւելքի մարդիկ, տոհմերը, ցեղերը, նստակեցութեան ձգտող քոչուոր-կիսաքոչուոր ցեղերը ծարաւի էին խաղաղութեան, որը կարող էր բերել միայն մի զօրաւոր ձեռք, մի զօրաւոր պետական ամպշողմանի և այդ կատարեց Ալեքսանդր Մակեդոնացի Պարսկաստանը՝ Դարեհի բարեմոտագումներով։

Բաւական է յիշել միայն երեք փաստ. առաջինը՝ Կիւրոսի բաւականին խաղաղ մուտքը թշնամի՝ հօգի Բարեւոն թաղաքը և նախ՝ դէպի Բարեւոնի դիւխաւոր աստծու տաճարը ուղեւորուելը, ոչ թէ կողոպտելու, այլ զոհաբերութիւն անելու, իրեն յայտարարելով Բարեւոնի մեծ աստծու՝ Մարդուկի որդին, և նրա հրաւերով եկած Բարեւոն։ Ապա՝ Կիւրոսի որդու, Կամբիւսի, Եգիպտոսը նուաճելիս, յարգալից վերաբերմունքը եգիպտական տաճարներին (Ամոնի, Նէյթի)։ Վերջապէս յիշենք Դարեհ առաջինի նամակը Փոքր Ասիայի փոխարքային՝ աստրապին, որով զգուշացնում էր և հայրաբար հրամայում առանձին յարգանք տածել յունական աստուածներին և քուրմերին, մասնաւորապէս Ապոլոնի տաճարին։ Սրանով, շատ այլ փաստերի հետ, հիմք էր դրւում պետական բարձր իմաստութեան, պետական շրջահայեց թաղաքականութեան, հեռատես դիւանադիտութեան։ Միջանկեալ յիշենք, որ, դրեթէ լուեւայն, վերացել է մասամբ ճշմարիտ, բայց մեծ մասամբ սխալ այն տեսակէտը, որ մի քանի տասնեակ տարի իշխում էր (ոչ ամենուրեք) պատմագրութեան մէջ։ Ըստ այդ տեսակէտի, իբրեւ թէ կիւրոսեան, աղեքսանդրեան և այլոց բռնութեամբ, արագ ստեղծուած կայսրութիւնները նոյն արագութեամբ էլ քայքայւում էին։ Ըստ որում, որպէս օրինակ, բերում էր Կիւրոսի և Աղեքսանդր Մակեդոնացու անուր բայց ոչ Դարեհի, Թուրթոսի, Սարգոնի, Ասարհադոնի, Ջինգիզ-խանի... Ինչպէս տեսանք, նման կայսրութիւնների 100—300 և աւելի տարիների դոյութիւնը միանգամայն հերիք էին հասարակական կեանքի զգալի առաջադիմութեան, կամ յետադիմութեան համար։ Քիչ բան չէ չորսից տասնչորս սերունդի ապրելը նոյն աշխարհակալութեան դարաշրջանի մէջ։



Բացի մի քանի բացասական մանր ու միջակ փաստերից, պարսից աշխարհակալ տէրութեան աւելի քան երկու դար ձգուող խաղաղ լինարարութեան ժամանակամիջոցում, հին Արեւելքի մի զլալի մասում տնտեսական, էթնիկ եւ մշակութային մեծ վերելք ապրեցին բազմաթիւ ցեղեր ու ժողովուրդներ: Սրանք բաղմացան, անեցին, դարգացան, շփուեցին իրար հետ, սովորեցին իրարից: Աւելին, նրանք նամաչեցին ոչ միայն իրար, այլեւ նամաչեցին հեմց անձամբ իրենց՝ տնտեսական եւ հասարակական հասունութիւն ապրելով եւ դիտակցելով, զգալով, որ իրենք եւս կարող են ապրել ինքնուրոյն՝ ունենալ սեփական պետութիւն: Այս մէկը՝ արդէն Աքեմենեան Պարսկաստանի երկդարեան մեծ տիրապետութեան առաջին արդասիւք-կարակացութիւնն էր, առաջին կարգի մեծագոյն հետեւանքը, նաեւ՝ հետագայի հելլենիզմի ատաղձն ու գլխաւոր խարխալը, իր պետական կարգ ու սարքով, աշխատանքի կազմակերպումով, յունական մեծ մշակոյթի բեղմնաւորումով:

Միանգամայն նպաստաւոր, պետականօրէն իմաստուն՝ այսինքն դարաշրջանի մեծ տարածում ստացած եւ ժամանակից թելադրուող, այսինքն ժամանակի իրերի ընթացքի անհրաժեշտ տրամադրութեանն արժապանհող, ժամանակին համընթաց քաղաքականութիւն էր վարում Աքեմենեան պարսից արքունիքը: Դարեհի ստեղծած միասնական դրամական եւ չափ ու կշիռի դրութիւնը անգամ Հնդդոտի հիացմունքը շարժած, ճանապարհների կառուցումն ու խտտութեամբ ապահովումը, մաքսերի ու հարկերի կարգաւորումը, ժողովուրդների կեանքի առաջընթացի համար նոր եւ նորմալ միջոցներ ու հող էին ստեղծում: Տակաւին ստրկատիրական յարաբերութիւններին չանցած, նոր ծաղող կամ դարգացում ապրող ցեղատիրութեան եւ ռազմական դեմոկրատիայի պայմաններում այս ամէնը հանդուրժելի եւ նպաստաւոր եղաւ շատ ցեղերի ու ժողովուրդների, դրանց մէջ նաեւ հայ ժողովրդի համար, որ անցել էր արդէն պետականութեան ոչ միայն դադափարին, այլեւ՝ դործադրութեան:



Պարս-աքեմենեան հզօր կայսրութեան ոլորտի մէջ առնուած դրեթէ բոլոր ցեղերն ու ժողովուրդները, իրենց ընդհանուր կեանքում, զգալի վերելք ապրեցին՝ յանդելով պետական լինելիութեան զազափարին: Դրանց մէջ առանձին տեղ էին դրաւում հայ-արմէները: Դեռեւս Դարեհից մէկ դար առաջ հայկական ցեղերը միաւորուելով, սեփական պետականութեան հիմքերն էին դրել, որ կիսով չափ կրօնքեց իր ինքնուրոյնութիւնը, ենթարկուելով ասելի

հզոր Մարաստան—Մեղիային, ապա՝ Աբեմենեան Պարսկաստանին։ Առեկին. պարսկական աշխարհակալութիւնը Եդիպտոսի նման երկրի համար, եթէ կարելի է համարել չարեաց փոքրաւոյնը, ապա Հայկական Լեոնաշխարհի բնակիչների, մասնաւորապէս հայկական ցեղերի համար իրաւունք ունենք այն դնահատելու ուղղակի որպէս բարեխառնութիւն։

Մեր երկարամեայ ուսումնասիրութիւնների ընթացքում եկանք այն հաստատ համոզմանը, որ Աբեմենեան Պարսկաստանի տիրապետութեան տակ առնուած մի քանի տասնեակ ցեղերի ու ժողովուրդների մէջ, արտօնեալ պարսիկներից յետոյ, թերեւս առաջինը հայերն էին, որոնք պարսից արքունիքից ստացել էին ամենաշատ իրաւունքներն ու վստահութիւնը, եւ դուցէ ամենից շատ շահոյն էին եղել պարսկահպատակութեան այդ երկու դարերի ընթացքում։ Պարսից արքունիքի այդ տեսական կայուն քաղաքականութեամբ առաջնորդուելը անշուշտ ոչ թէ պարսերին հեռաւոր ցեղակից լինելու հանգամանքով էր թելադրուած, այլ՝ ուրիշ պատճառներով։ Նախապէս պարսերի լրջա դերիշխանութիւն ունեցած հիւսիսում եւ Ատրպատականում բնակուած մարմեդերը ոչ միայն իրանական ցեղերից մէկն էին, այլեւ, անտարկոյս, լեզուի սոսկ բարբառային տարբերութեամբ, պարսերի եղբայր ցեղն էին։ Սակայն մարական աւազանին երկար ժամանակ չէր հաշուում իր առաջնութեան կորստի հետ, եւ աշխատում էր ետ խել պարսերից, ինչպէս եղաւ Կիւրոսի որդու՝ Կամբիւս արքայի օրօք, մեղացի Գաութաթա մոդ եղբայրների կատարած յեղաշրջմամբ։ Այդ պատճառով էլ իրենց այդքան մօտ ցեղակից մարմեդերը աւելի քիչ վստահելի էին պարսերի համար, քան՝ հայարմէնները։ Նոյնիսկ հայերի խոնարհ հնազանդութեան փաստով չի մեկնաբանուի այդ, որը հակառակը ցուցաբերել էին հայերն ոչ միայն մարմեդահայի, այլեւ հենց իրեն՝ Գարեհի ապարհէլ մտնելու ժամանակ՝ հայկական հզոր ապստոլութեամբ եւ մեծ ու յամու կոխներով։ Արդ, որո՞նք էին այդ վստահութեան եւ հայերին լայն իրաւունքներ տալու պատճառները։ Այն, որ պարսից տէրութեան բովանդակ հիւսիսը, Կասպիականի հարաւային աւազանի եւ Արաքսի ստորին աւազանի հետ, որոնք այնքան մօտ էին Մարաստանին, խաղաղ ու հնազանդ բնակչութիւն ունեցող երկրներ էին, եւ դեռ շատ հեռու էին հպատակուելու, մանաւանդ օտար տիրապետութիւնը հանդուրժելու աստիճանից։ Միաժամանակ այդ բազմալեզու ցեղերի ռազմականից եւ աւելի ծանօթ եւ ոչ շատ հեռաւոր անցեալում հզոր Մարաստանը իր իսկ դոյութեամբ, որպէս իրաւազրկուած աւաղ եղբայր, մշտական զոհութեան եւ սարսափի մէջ էր պահում հարուստ դերիշխանութեան անցած պարսից աւազանուն եւ արքունիքին։ Կար

եւ աւելի վտանգաւորը. մարերի հիւսիս, Կոլսիդայի եւ Ճորոխի
 հովտի անտառներից մինչեւ Քուռի աւազանը ընկած եւ Կասպից
 ծովի արեւմտեան ափերը բռնած Կովկասեան լեռնաշղթայի վրայ եւ
 այն կողմը ապրում էին բազմազան, նոյնպէս անհանդիստ, աղատ
 հերոսական ուղիքի ցեղեր: Սրանք արշաւանքներ էին կազմակեր-
 պում դէպի հարաւ, որից օգտուելով կարող էին կրկին ոտքի ելնել
 մարմեղացիները, — ինչպէս այդ եղաւ Կամրիւսի եղբայրական ար-
 շաւանքների ընթացքում, — եւ միանալ դրսից եկող այդ հղօր ալիքին,
 ընկճել իրենց իրաւագրկած պարսից աւազանուն, եւ բերել իրենց
 դաշը: Ահա, այդ սարսափն էր, որ պարսկական արքունիքում,
 սկսած Դարեհից (դուցէ եւ Կիւրոսից), առաւել կամ միայն հայերի
 մէջ էին տեսնում այն ուժը, որ կարող էր վաճառ դառնալ հիւսիսա-
 յին ցեղերի դէմ եւ իրենց բռնանքի տակ պահել մարերին, որոնց դե-
 րիշխանութիւնը տապալելու դործում նոյն հայերը, երուանդեան
 դահաժառանգ Տիգրանի ղլխաւորութեամբ, պակաս զեր չխաղացին
 Ք. Ա. 550—ական թթ.: Տիգրանը նպատակ էր նախկին ընկեր-բարե-
 կամ պարսից Կիրոսին եւ նրա բանակի յաղորդութեանը, մարաց
 Ափղաճակին ոչնչացնելու եւ մարական պետութիւնը խորտակելու
 դործում: Պատահական չի կարելի համարել հայկական հին էպոսի
 պնդումը, որ մար-Ափղաճակին սպանել է հենց իր կողմ կղբայրը՝
 հայոց երուանդունի հարստութեան առաջին թագաւոր երուանդի որ-
 դի Տիգրան աւագը: Այդ վստահութիւնն էր, որ հակառակ ուրիշ (բայց
 ոչ բոլոր) երկրներում իրենց վարած քաղաքականութեան, երբ
 սատրապ, այսինքն փոխարքայ էին նշանակում պարսից աւազանուց,
 Հայաստանի սատրապները ժառանգաբար մնում էին հայկական
 երուանդեան հարստութեան շառաւիղները, մանաւանդ նախապէս
 13-րդ սատրապութեան մէջ: Սրանք բոլորը երկրում կոչւում էին
 երուանդ (յունարէն՝ Օրոնտես), որ համազօր էր, հայոց համար,
 թագաւոր բառին: Պարսից սատրապ համարուող հայ վասալ-թագա-
 ւորները եւս, շատ այլ սատրապների նման, պղնձէ դրամ կտրելու
 իրաւունքը ունէին, որպիսին պահպանուել է օրինակ առաջին եր-
 ուանդ-Օրոնտեսի անունով: Ամբողջ Հայկական Լեռնաշխարհը եւ
 Քուռ-Արաքսի միջազետեան տարածութիւնը, մինչեւ այժմեան Դա-
 րարաղի եւ Մուղանի դաշտերը, ապա (Արտաշեսեան հարստութիւնից
 սկսած) նաեւ Կասպից ծովի ափերը, պարսկական արքունիքը վստա-
 հել էր հայ ուղիքի ցեղապետերին եւ սատրապներին: Փոքր Հայ-
 քից եւ Ծովքից մինչեւ Արարատեան դաշտն ընդգրկող հայաբնակ
 տարածութիւններէն դուրս գտնուող այս երկրներում եւս իշխելու,
 բնակուելու իրաւունքը վստահուած էր հայկական ցեղերին եւ նրա
 աւազանուն, հիւսիսային սահմանները պահպանելու, հարկ տալու եւ

պատերազմի ժամանակ բանակ տալու պարտաւորութեամբ:

Փոքր չէր հայերի հարկային բաժինը, պարսից կայսրութեան մէջ: Նրանք Պարսկաստան էին ուղարկում, ինչպէս վկայում է Հերոդոտը, տարեկան 20 հազար նոսր, միաժամանակ տալով աւելի քան 300 պարսկական տաղանդ հորի՝ մօտ 10 թոն արծաթ (1 տաղանդը = 32.5 փ. արծաթի): Փոքր չէր նաեւ հայերի զինական օգնութիւնը: Պատերազմի ժամանակ, հայերը՝ Աքեմենեան Պարսկաստանին որպէս օգնական զօրք տալիս էին 20 հազարանոց հետեւազօր եւ 4 հազարանոց հեծելազօր: Սա կազմում էր Արմենիայի թաղաւորի բանակի կէսը (48 հազարի): Այդ զօրամասերով հայերը մասնակցեցին եւ Կիւրոսի բարեկենսան արշաւանքին եւ Քսերքսեսի յունական արշաւանքին, Դարեհի փետայ Արտաքսէոսի բանակում: Այս հաւաստի մանրամասնութիւնները պատմում են յոյն հեղինակները, յատկապէս Հերոդոտը եւ Քսենոֆոնը, որ 401 թուականին, այսինքն 23 ու կէս դար մեզանից առաջ 10 հազար յոյն զինուորների հետ, անցել է Հայաստանով եւ բաւականին մանրամասն նկարագրել հայերի կենքի եւ իրաւական իրճակի մասին, իր երկու յայտնի աշխատութիւններէ մէջ:

Չհաշուած Կիւրոսի եւ նրա որդի Կամբիւսի ժամանակաշրջանի երեսոճամեակը, Հայաստանը երկու հարիւր տարի մնալով պարսից կայսրութեան կազմի մէջ, որպէս սատրապութիւններից մէկը, նոյնիսկ երկուսը (13-րդ եւ 18-րդ), ունեցաւ բնակչութեան զգալի քանակական աճ, զգալի տարածում եւ հայ բնակչութեան էթնիկ, աւելի ուժեղ, համախմբում: Հայ բնակչութեան տարածումը դէպի Արեւելք, եւ նրա տնտեսական, մշակութային կենքի վերելքը, անշուշտ աւելի արագ կատարուեց եւ աւելի մեծ չափերով, քան նախորդ հարկւրամեակի ընթացքում (Ք. Ա. 612-520 թթ.): Կրկնենք, որ դրան նպաստում էր նախ Հայաստանի ներքին լայն ինքնավարութիւնը ու խաղաղութիւնը: Այս կրեք հարիւր տարիների՝ Նրուանդունի հարստութեան ընթացքում էր, որ հունցուեց հայ ժողովրդի գոյացման խնդիրը (որի թթիւմը կազմում էին հայ-արմէնական հնդ-եւրոպական ցեղային միութիւնները), եւ այդ մի ընդարձակ տարածութեան մէջ, որ հետապայում, իրաւամբ գիտութեան մէջ կոչուեց Հայկական Լեռնաշխարհ: Միասնական ժողովուրդ դառնալը եւ հայկական միասնական պետութիւն ստեղծելը, վիճակուեց հայ Արտաշեսեան հարստութեան ժամանակներին, կեդրոն ունենալով Այրարատը, Վասպուրականը, Ծոփքը, սկսած Արտաշէս Ա-ից մինչեւ Տիգրան Բ-ն (Ք. Ա. 189-80-ական թթ.):

Շուրջ երկու դար տեւող հայկական այս մեծ հարստութիւնը հասաւ նրան, որ մէկ քառորդ դարի հատուածում՝ Ք. Ա. 80-60 թթ., Հայաստանը բարձրացաւ հզօր կայսրութեան աստիճանին, ա-

ւելի ճիշդ՝ դարձաւ հին աշխարհի պատմութեան այդ ժամանակուայ, Հոռմից յետոյ, երկրորդ հզօր տէրութիւնը: Սա պարտական էր ոչ միայն Արտաշէսեան հարստութեան հզօր դահլալներէի պետական իմաստութեան, հանճարին ու քանքերին, այլ այդ հարստութեան անմիջական նախորդը հանդիսացող, անտարակոյս նաեւ ժառանգական նախորդը հանդիսացող, չորս հարիւրամեայ Երուանդունի հարստութեան դործադրած քանքերին, մի հարստութեան, որի ղեկավարութեան երկու երրորդը ընթացաւ պարս-իրանական հզօր աշխարհակալութեան հովանու տակ, դռնուկելով նրա կողմի մէջ:

Քրիստոնէական թուարկութեան առաջին իսկ տարւոյնից վերացող Արտաշէսեան հարստութեանը Հայաստանում յաջորդեց կէսդարեան շատ բուռն եւ շփոթ մի շրջան: Այդ՝ հոռմա-պարթեւական (1) մրցակցութեան եւ հայկական ներքին կեանքում եղած խլրտումներէ եւ անկախութեան համար մղուող պայքարի տանձամեակներն էին: Հայկական Լեոնաշխարհի վրայ դերիշխելը, թէ Հոռմի եւ թէ Պարսկաստանի համար ունէր արդէն ոչ միայն ռազմա-ստրատեգիական, այլեւ այս անգամից արդէն առաւել՝ տնտեսական, առեւտրական նշանակութիւն: Անշուշտ, Հոռմը հզօր էր եւ շատ ակրեսիվ, դաժան ու կողոպտիչ: Թեքեա այս վերջիններս էին ղլխաւոր պատճառը, որ այնտեմենային, հայկական աւագանու, մանաւանդ արեւելեան բաժնի, մեծադույն մասը քաղաքականապէս հակուած էր դէպի հաղարամեայ դրացին, դէպի վեց դարերէ ընթացեալ մօտիկից ճանաչուած աւելի ուխտապահ, վեհանձն պարսիկները, թէեւ դրանից երկիրը տուժում էր մեծապէս, որովհետեւ Հոռմը չէր նահանջում իր նպատակից: Այստեղ է, որ չի կարելի վիճարկել, թէ հայկական աւագանու քաղաքական այդ կողմնորոշումը աւելի նպաստաւոր է եղել իր դասային շահերի, քան երկրի ընդհանուր շահերի համար: Այս անգամ եւս այդ երկու շահերը համազօր էին իրար:

Պարս-հոռմէական պայքարը, որ սաստկացաւ առաջին դարի 50-60-ական թուականներին, պսակուեց պարթեւ արքայից-արքայ Վաղարշի եւ հոռմէական կայսեր Ներոնի համաձայնութեամբ: Հռանդէայում հայ-պարսկական միացեալ բանակներէ հարուածներէ հոռմէական բանակի (Պետոս զօրավարի) կրած չարաչար պար-

1. Երբեմն քաղաքականութեան անարդարութեանը մօլի մաքիշտ դարձած որոշ կեղծարար պատմագրանքի պարթեւներին փորձում են համել արիւք-պարսկական ընդհանուր աւագանից եւ այլ էրմիկական պատկանութեան պատմական հագցմիլ. միմչեռ պարթեւ-պարթեւ պարս-փարսի սոսկ արեւելեան՝ Միքիմ սախական առաջնութեան արդիւմքը պէտք է համարել:

տութիւնից յետոյ, Հոռմը հարկադրուած եղաւ բռնել նահանջի եւ զիջման ուղին, պահանջելով միայն ձեւական հաւասարութիւն: Պարտից արքայի կրտսեր եղբայր՝ Տրդատ (Տիրիդատ) Արշակունին այս անգամ վերջնականապէս բարձրացաւ հայոց դահլ վրայ, պայմանով, որ Ներոն կայսրը, անձամբ, Հոռմի ֆորումի մէջ, կատարէ թագադրումը:

Նոանդուն ռադմիկ-դահակալ, եւ շատ շուտով հայացած եւ տնկալի քաղաքականութեան դիմած Տրդատով սկսուեց դարձեալ չորս դարից քիչ պակաս տեւած հայ-Արշակունի հարստութիւնը, որ կիսով չափ մնաց Պարսկաստանից կիսակախեալ վիճակում: Հայ-Արշակունի թաղաւորները ոչ միայն առաջին հարկերամեակում, այլեւ հետագայում, իրենց տոհմի հակառակորդ Սասանեան հարստութեան հանդէս դալուց յետոյ իսկ (226-636/651 թթ.), մեծ մասամբ դարձեալ դահակալում էին պարսից արքունիքի համաձայնութեամբ եւ միայն երկրորդ դարի կէսից սկսած՝ դրեթէ ժառանգարար: Սակայն յայտնի է, որ Հայաստանի բաժանումից յետոյ (385/387 թթ.) հայ դահակալները արագ վերացան Հռոմէական մասում, իսկ պարսկական մասում մնացին մինչեւ 428 թուականը եւ վերացուեցին, ուժեղացած, կեղերնախոյս տրամադրութեամբ համակուած հայ նոր ֆէոտալ իշխանների պահանջով, պարսից արքունիքից:

Հայ պատմիչների խտացած վկայութիւնների հիման վրայ, նոյնիսկ վերջին հարկերամեակի, 19-20-րդ դարերի, հայ դիտական պատմադրութիւնը թէ պարթեական եւ թէ մանաւանդ Սասանեան Պարսկաստանի վարած քաղաքականութիւնը Հայաստանի նկատմամբ շատ աւելի մոայլ գունաւորումով է արձանագրել ու դնահատել, քան այն եղել է իրականում: Ուստի, պատահական չէ, որ 19-րդ դարի, մասամբ նաեւ 20-րդ դարի հայ գեղարուեստական գրականութեան մէջ այդ վերաբերմունքը դտել է իր նոյնպէս խտացած արտայայտութիւնը, երբեմն պակաս նկատելով Հռոմէական եւ յունական աւելի աւերիչ դաժանութիւնների եռապատիկ փաստերը: Մինչդեռ, առարկայօրէն, արդար մտօք մօտենալով պատմական այդ հարցերին, դալիս ենք հակառակ եզրակացութեան: Ի հարկէ սրանով ի սպառ չենք մոռանում հին արեւելեան կամ ամէն կարգի բռնակալութեանը յատուկ, տուեալ դէպքում պարսից Շապուհ Բ-ի (309-379 թթ.), մասամբ եւ Յաղկերտ Բ-ի (440-457 թթ.) կատարած արինալի խփութութիւնները: Սակայն Հայաստանի եւ հայ ժողովուրդի համար էականը այս չէր, որ արձանադրուած է պատմութեան մէջ թանձր գոյներով ու դժերով: Անշուշտ այդ նոյն դարաշրջաններում տուեալ պետութեան նոյնիսկ հարադատ ժողովուրդը գերծ չէր անչափ շահադորձումից, բռնութիւններից եւ իրաւազրկութիւնից: Հին աշխարհի եւ միջնա-

դարև պայմաններում, առաւել եւս արեւելեան բռնատիրութիւններէ ժամանակ, ոչ մի ժողովուրդ, մանաւանդ աշխատաւոր մասսաները ապահով չէին դրանից: Հարստահարման եւ իրաւազրկութեան սահմաններէ չափերէ բազմատուժը պէտք է անել, ոչ թէ դիմել դրանց չղոյութիւնը ապարդիւն որոնելուն:

Մեր ելակէտը հենց բազդատումն է այս կամ այն տիրապետութեան եւ դրա հետեւանքների: Սկսենք ամենակարեւոր եւ միջոցական նշանակութիւն ունեցող հարցերից: Ինչպէս Պարթեւական Պարսկաստանի, այնպէս էլ Սասանեան Պարսկաստանի երկրորդ վեցդարեան դերիշխանութեան եւ ազդեցութեան շրջանում, Հայաստանի հողի վրայ Հայ ժողովուրդը, աքեմենեանների ժամանակների նման, քանակական մեծ աճ չունենալով հանդերձ, այնուամենայնիւ, ինչպէս ժամանակակից այլ բարւօք վիճակի ժողովուրդները, Ֆիզիքական-քանակական որոշակի աճ ունեցաւ եւ ոչ թէ պակասեց: Հայ բնակչութեան այդ աճի մեծ մասը նոյնիսկ տարածուեց Հայաստանից դուրս, սահմանակից դրացի երկրների մէջ եւ մեծ մասամբ չձուլուեց այնտեղ, այլ հետզհետէ տեղ-տեղ քանակ կազմեց եւ այդ մարդերում պահպանեց իր ուրոյն էթնիկ նկարագիրը, իր մշակութային-կրօնական եւ լեզուական իւրայատկութիւններով: Այդ երկրներից էին Փոքր Ասիան, արդի սահմանների Անդրկովկասը, հիւսիսային Պարսկաստանը, Ասորիքը, Պաղեստինը, մինչեւ իսկ ավերիկեան երկրամասերից Եգիպտոսը, Եթովպիան: Անշուշտ, այդ երկրներում հայ-արմենական նորեկ տարրը նաեւ տարածում էր այն լաւը, եւ այդ վայրերում ընդունելին, ինչ որ ստեղծել էր Հայ ժողովուրդը սկսած դեռ ուրարտական ժամանակներից եւ չունէին բնիկները: Միաժամանակ նրանցից էլ ընդունում էին իրենց չունեցածը, որոնք երբեմն էլ, վերադարձի դէպքերում, բերում էին Հայաստան:

Այս կապակցութեամբ չի կարելի չարձանագրել, որ վաղնջադոյն հայկական մարդերում (Փոքր Հայք, Մոփք, Աղձնիք) քնակուող հայութիւնը, որ շատ անգամ ենթակա էր լինում հռոմայունական վարչական եւ բարձր մշակոյթի ազդեցութիւններին, անտարակոյս աւելի բարձր նուաճումների էր հասնում, քան պարսկական ազդեցութիւնը կրող արեւելեան մասի հայութիւնը: Սակայն ժամանակն է, վերջապէս, արձանագրել նաեւ մի շատ կարեւոր հանդամանք, որ Արեւմուտքի ազդեցութեան տակ տեղի ունեցած հայկական մշակութային նուաճումների մեծագոյն մասը չէր թանձրանում իր ազդային պատկանելիութեան մէջ, այլ գերազանցօրէն տարալուծւում, մտնում էր նոյն հոռմէական, մանաւանդ յունական դործօնի մէջ, այսինքն՝ օտար մշակոյթի մէջ, ինչպէս այդ դերթէ սովորական երեւոյթ էր ամէն տեսակէտից դերիշխող, տիրող ժողո-

վուրդները դերազանց, նոյնիսկ հաւասար կամ ցածր մշակոյթին տուրնչուող, կամ ենթակայ ժողովուրդների, աւելի շատ նրանց բեկորները համար:

Եւ ահա պարտաւոր ենք եւ վաղուց ժամանակն է արձանագրել, որ պարսկական քաղաքական-իրաւական եւ տնտեսական աղբեցութեան շատ աւելի երկար ժամանակաշրջանում էր, որ մշակուեց հայկական նիւթական եւ հողեւոր մշակոյթը, որ հայ ժողովուրդը, իր աւագանու եւ մտաւորականութեան նախաձեռնութեամբ, 280-301 թուականներին մտաւ նոր զաղափարախօսութեան՝ միաստուածութեան, այսինքն նորամուտ քրիստոնէական կրօնի ներքոյ, հետզհետէ նրան տալով իր ազդային՝ զուտ հայկական դոյնը, հայկական սլաւաճ տարադի մէջ: Սա հայերի մեծագոյն ելոյթն էր զրազաշտական իրանի դէմ եւ պարսից արքունիքն ու աւագանին, իրենց հզօր թեւի տակ այդ եւս հանդուրժեցին: Թէեւ երբեմն, այն էլ ուշացած, հին պարս-հայկական դրեթէ միասնական կրօնը վերականգնելու (Արամազդի, յատկապէս Անահիտի...), նոյնիսկ երբեմն շատ խիստ եւ բռնի փորձերի ու ծանր հալածանքների էին դիմում: Բայց հայերի դիմադրութիւնը, ինչպիսիք եղան Էրզրուարի վերջերին եւ Կարի կէսերին՝ Վարդանանց եւ Վահանանց կռիւները ժամանակ, կանխում էին այդ վճիռները: Պարսից արքունիքը, փոխանակ աւելի խիստ բռնութեան դիմելու, որից հայկական դարաւոր իրանական կողմ-նորոշումը չեղելու վտիւր կար միշտ, կրկին անցնում էր ղըջման, նոյնիսկ ներման քաղաքականութեան: Հայկական նոր ու նորագոյն պատմութեան էջերում այս երեւոյթները սովորաբար դիտուում են միայն որպէս հայկական զօրեղ ու յամառ դիմադրութեան եւ յաղթանակների արդիւնք: Զօխտելով այս նշանակալից հանգամանքը, չպէտք է մոռանալ երբեք, որ այդ, դերազանցօրէն իրանի աւանդութիւն դարձած այն քաղաքականութեան շնորհիւ էր լինում, որպէսզի հայկական տարրը, զիջումների դնով իսկ, կապած պահուի իրանին, որպէս նրա փորձուած հիւսիսային վահան:

Պետականութիւնը կորցնելու չեմին կատարուեց աւելի մեծակա՝ Հայաստանը բարձրացրեց աւելի հզօր անպարտելի ազդային դրօշ՝ ստեղծելով սեփական դպրութիւն (396 թ.): Վերջապէս Հայաստանի պետականութեան կորստից յետոյ, 430-ական թուականներէից մինչեւ 630-ական թուականները, շուրջ երկու դար, դարձեալ դերազանցօրէն պարսկական քաղաքական աղբեցութեան ներքոյ, հայկական մշակոյթը ասորեց այնպիսի վերելք, որպիսին դժուար թէ կարողանար ունենալ այդքան բարձր որակով մի այլ, նոյնիսկ պետականութիւն ունեցող ժողովուրդ: Այդ մեծ թռիչքի ողջ Կարգ

դարը հետադադրում նոյնիսկ, իրաւամբ, կոչուեց հին հայկական ոսկեդար:

Պարսկաստանը, եթէ որեւէ առանձին մի ձեւով չէր նպաստում դրան, ապա չէր էլ խանդարում: Թող չասեն, թէ պարսից արքունիքը դրա համար միջոց եւ ոյժ չունէր: Անվիճելի ոյժ եւ ակրեսիվ արամադրութիւն ունեցած ժամանակներում իսկ, պարսից արքաները (նոյնիսկ Շապուհ Բ-ը, իր դաժան արշաւանքով) Հայաստանը տրորել են ոչ աւերելու նպատակով եւ ոչ էլ որեւէ ժամանակ որեւէ փորձ են արել փոխելու Հայաստանի էթնիկ կերպարանքը, լինի այդ բռնի կամ «կամաւոր ձուլման» եղանակով, դադութացման կարգով՝ պարսիկ կամ այլ օտար տարր մտցնելով երկիրը, որին մասամբ, դեմում էին իրենց այլ տիրոյթներում: Բացառութեամբ մէկ դէպքից (Ըստ Հայ պատմագրութեան, որ վերաբերում է Շապուհ Բ. երկարակեաց արքայից-արքայի ծանր պատիժ-ուղղմը թիւն, անշուշտ խիստ չափազանցուած Հայ պատմիչ Բիւզանդի կողմից), պարսից պետութիւնը Հայաստանում այլ ամգամ մասնայական գաղթ ու քարդեր չի կադրակերպել, ոչ էլ, որ ամենագլխաւորն է, հայ ժողովրդին փորձել է գլխատել, ոչնչացնելով նրա աւագանին (ինչպէս անում էին Հայաստանը նուաճած գրեթէ բոլոր այլ պետութիւնները), կամ իրաւագրկելով եւ փոխարինելով պարսիկ աւագանիով եւ, որ գլխաւոր ճակատագրականն է, Հայաստանում օտար տարր չի բնակեցրել: Այնինչ, նոյն ժամանակներում, եւ քիչ անց, Հայաստանում այդ կատարում էին բիւզանդացի յոյները եւ սրանցից քիչ յետոյ՝ արաբ տիրակալները: Այդ շրջանը կարելի է երկարել, բայց այսօրեան էլ բաւական է, որպէսզի պարզ դառնայ Հայ-պարսկական մինչ այդ աւելի քան հազարամեայ դրացիութեան կրած փոխադրեցութիւնների եւ մահաւանդ պարսից տիրապետութեան անհամեմատ դրական հետեւանքների ճշմարիտ պատկերը: Ծակատադրական հետեւանքի հասնող բացասական արարք, համազգային դժբախտութիւն բերող փաստեր մեզ չի կաջողուում դտնել եւ չի կարելի դտնել Հայ-պարսկական, պարս-հայկական յարաբերութիւնների մէջ, մինչեւ 16-րդ դարը:

Այս տեսանկիւնով մօտենալիս չի կարելի նաեւ չնշել, որ Հայաստանի հանդէպ, արաբական հարուածների տակ, ոչ բարեկամաբար տրամադրուած նոյնիսկ Սասանեան Պարսկաստանի պետականութեան կործանումը, պէտք է համարել հայ ժողովրդի հետագայ դժբախտութիւնների կայուն սկիզբը: Ըստ որում, այդ «ոչ բարեկամաբար» արտայայտութիւնը՝ Սասանեան արքունիքի կողմից, վերաբերում էր ոչ թէ Հայաստանի պետական դոյութեան դէմ, կամ բացասաբար տրամադրուած Հայ ժողովրդի նկատմամբ, այլ Հայ Արշակունի, թէկուզ եւ վասալ, արքունիքի նկատմամբ: Վերջիններս

խիստ ներհակ, նոյնիսկ թշնամական դիրք էին բռնել բոլոր սասան-
եաններէ հանդէպ, նրանց համարելով իրենց հարադատ ցեղի՝ պար-
սիկ Արշակունիներին վերացնողները (յիշենք 360-ական թուական-
ներէից Շապուհի եւ հայոց թագաւոր Արշակ Բ-ի շուրջը հիւսուած
«հայրենի հողի զօրութեան» հայկական հրաշալի վէպը)։ Մինչդեռ
հայոց աւանդական պատմութեան մէջ այդ դարաշրջանի Հայաստանի
դժբախտութեան սկիզբը մեծ մասամբ համարուած է հայ Արշակու-
նիներէ, այն էլ արդէն ստուերային դարձած, հարստութեան վերա-
ցումը, որ տեղի ունեցաւ հայ աւագանու մեծագոյն մասի պահան-
ջով, որին եւ ընդառաջեց պարսից արքունիքը։ Սրանով սկսուած է
հայ-պարսկական յարաբերութիւնների երկրորդ շրջանը։



Հին հայ-պարսկական յարաբերութիւնների պատմութեան մէջ
ամենից յուզիչ եւ ծանր ու անմոռաց էլը Ծրդ դարի կէսի Վարդա-
նանց պատերազմի, յատկապէս Աւարայրի ճակատամարտի անցքերն
են կազմում, որոնց պատմութիւնը վիճելի եւ տարձաճւ զնահատման
է ենթարկուել ղեռնու Ծրդ դարից (Եղիշէ եւ Փարպեցի), յատկա-
պէս՝ 19-րդ դարի երկրորդ կէսից սկսած։ Մեր վաղուց ասածը կրկնե-
լով, պէտք է ասել, որ Պարսկաստանը ոչ մի անգամ, ոչ մի ղէպշում,
նաեւ Ծրդ դարում, ծրագիր չի ունեցել հայերին ձուլելու՝ ասիմիլիա-
ցիայի ենթարկելու։ Այն ժամանակներում ընդհանրապէս նման ծրագիր
դժուար ենթադրելի է։ Պարսից արքունիքը շատ լաւ պէտք է իմա-
նար իրեն դէմ Վասակի եւ Վարդանի կողմից ծրագրուող ապստամ-
բութեան մասին։ Նրանց համար աւելի աններելի եւ վտանգաւոր էր,
որ հայ դործիչները օգնութեան դիմում էին պատրաստել հոնքերին ու
յոյներին։ Այնուհանդերձ, հայազգի մարդպան եւ պարսից իւլիստային
ուժերի գերադոյն հրամանատար, Վասակի խոհեմ եւ հեռատես քա-
ղաքականութեան եւ բանակցութիւնների շնորհիւ, Պարսկաստանը
պատրաստ էր հաւատալու եւ ետ կանգնելու իր սլատիչ արշաւան-
քից, մանաւանդ հրաժարուելու, դաւանափոխութիւն հարկադրելու
վճռից։ Այնուհանդերձ, բացի Վարդանանց պատերազմի երկու-երեք
հաղար, կամ դուցէ աւելի պակաս եւ Վահանանց պատերազմի ժա-
մանակ եւս դուցէ նոյնքան տրուած զոհերից, հայերը աւելի մեծ
կորուստներ չունեցան։ Վերջում էլ կնքուեց Նուարսակի բարեյաջող
հաշտութիւնը, որը կնքեց պարսից հեռատես թագաւոր Վաղարշը, հայ
աւագանու հետ, յօդուտ Հայաստանի լայն ինքնավարութեան (484
թ.)։

Պարսկական տիրապետութեանը յաջորդած երկդարեան ա-
րաբական տիրապետութիւնը բուն Հայաստանի մեծագոյն մասում

(Արեւելեան մասում), իր վարչական գրութեան եւ ազգային-կրօնական քաղաքականութեամբ, եթէ աւերիչ ու քայքայիչ էր տիրապետութեան միջին հարիւրամեայ շրջանում, ապա միանգամայն տանելի էր, նոյնիսկ շատ բարենպաստ, ձեւական տիրապետութեան առաջին յիսունամեակում եւ մասամբ՝ վերացող տիրապետութեան վերջին յիսունամեակում։ Միջին հարիւրամեակում, որը ընդգրկում է ողջ Տ-րդ դարը, խալիֆաթի ծանր լուծն էր իջել նաեւ հայ երկրի եւ ժողովրդի վրայ։ Այդ մի սեւ դար էր, որի ընթացքում քարադործութեան մեծ վարպետ-շինարար հայ ժողովուրդը իր ընդարձակ հայրենի հողում ոչ մի տաճար, բերդ, կամուրջ, քաղաք, դուցէ նոյնիսկ դիւղական եկեղեցի չի կառուցել։

Տ-րդ դարի սկզբից ծայր առած այդ բազմահազար պանդուխտ հայերի շինարարական փորձի եւ հանճարի բազում արդասիքները, մեծ մասամբ անկնիք եւ անհասցէ, փայլեցին օտար հորիզոններում։ Մինչդեռ դրանից առաջ, յատկապէս քաջ յայտնի 395-635 թթ. եւ արարական ձեւական հպատակութեան 650/660 թթ. մինչեւ 695 թուականը, առանձին մի բացառիկ թափ ապրեց այդ հանճարը հայրենի երկրում եւ ուղիղ այդ երեք դարերի ընթացքում հայ ժողովուրդը ընդհանուր մշակոյթի, գիտութեան եւ շինարուեստի մարդերում, զուտ հայկական ուղով ու տարազով, այնպիսի մի նուաճում ունեցաւ, այն էլ ոչ քիչ արշաւանքների եւ հալածանքների պայմաններում, որ նման մի այլ օրինակ մի այլ ժողովրդի պատմութեան մէջ դժուար կարելի է գտնել։

Մինչեւ Տ-րդ դարը շատ տիրապետութիւններ տեսած եւ նրանց դառնութիւնները ճաշակած հայ ժողովուրդը առաջին անգամ արաբական տիրապետութեան այս միջին ընթացքում էր, որ հանդիպեց մի նոր, մինչ այդ անսովոր ճակատագրական դարձող երեւոյթի։ Հայաստանի հողի վրայ առաջին անգամ տեղի ունեցաւ էթնիկ կերպարանքի փոփոխութիւն, թէեւ ոչ մեծ չափերի, բայց վարակիչ օրինակով ու հետեւանքով։ Արաբական տիրապետութեան դժբախտ բնուէանքն էր այդ, որ Հայաստանում հիմք դրուեց առանձին զանազութիւններով տարախոս տարրի՝ արաբական ցեղերի բնակեցման, այն էլ երկրի ռազմա-տնտեսական կարեւոր կեդրոններում։ Նրանք նրատում էին, որպէս տէրեր, լայն արտօնութիւններով՝ հողեր սեփականացնելով, նուաճուած ժողովուրդներին թուլացնելու, քայքայելու, այլակերպելու, զանազան քայքայիչ ձեւեր մշակելով, որոնցից մէկն էլ տնտեսական-իրաւական հալածանքը վերացնելուն տրիտուր՝ իսլամն ընդունելով դաւանափոխ լինելն էր՝ մեծամեծ իրաւունքների տիրանալու խոստումով եւ փաստերով։

Նախիֆաթի վարած այս քաղաքականութիւնը դրանից յետոյ

վարեցին Հայաստանը նուաճած այլ ցեղերն ու ժողովուրդները: Դժբախտութիւնն այն էր, որ նորեկ էթնիկ տարրը իսլամ էր եւ ոչ քրիստոնեայ, որպիսին էր իր երկրում նուաճուած հայը: Ինչպէս նաեւ դժբախտութիւն էր, այդ տեսակէտից, որ նոյն ժամանակներում երկրի ընկի եւ շինարար տէրը՝ հայը, քրիստոնեայ մնաց: Այլ դէպքում՝ նորեկ իշխող տարրը հետզհետէ պէտք է հայանար Հայաստանում, ինչպէս այդ եղաւ հետագայում՝ Պարսկաստանում, ուր արարը պարսկացաւ: Միջին Ասիայում, Կովկասում եւ Հայաստանում, ուր հին արարը, պարսիկը, ինչպէս եւ նոր մոնկոլը՝ թուրքացան: Այս քաղաքականութիւնն էր, որ Հայաստանում իր հաղարամեայ տիրապետութեան եւ ազդեցութեան ժամանակամիջոցում բնաւ չփոքճեց վարել հայի ամենամօտիկ եւ հաղարամեայ հօր դրացին՝ նրա վրայ դերիշխող Իրանը-Պարսկաստանը: Ուշադրաւ է, որ նոր Սեֆեւիական Պարսկաստանում Ծահ-Աբրահը եւ նրա յաջորդները, որոնք չիա իսլամի մոլեռանդ հետեւորդները եւ տարածողներն էին, սնտարակոյս, առանց պատմութեան հին դասերին ծանօթ լինելու, հայերի նկատմամբ յանգեցին դրեթէ նոյն քաղաքական հանդուրժող տեսակէտին, որպիսին ունէին հին Իրանի պետական զործիշները՝ աքեմենեան, պարթեւ եւ սասանեան արքաները, արքունիքը եւ աւագանին: Ի հարկէ չպէտք է մոռանալ, որ այդ դարերի Սեֆեւիական Իրանի եւ թուրքիայի, հիմնականում հայ քրիստոնեայ կրօնը հանդուրժող քաղաքական վարքագիծը մեծապէս բխում էր նաեւ հայերից հարկադրարար դանձուող յաւելեալ հարկերի, շատ պիտանի դրաղմունքի՝ հողի մշակման, արհեստի եւ վաճառականութեան պատճառով: Նրանց համար շատ էլ ցանկալի էէր մասսայաբար կամ դիւրովին հայերի իսլամանալը, որովհետեւ իսլամ դարձած հայը եւս ղէնջել տակ էր մտնում եւ մեծ մասամբ դառնում յաւելեալ անարտադրող եւ յափշտակման ձգտող մի զանգուած:

Միաժամանակ չի կարելի մոռանալ, նաեւ Ծահ-Աբրահի հրամանով կատարուած այն սարսափելի բռնադադթի փաստը, որ տեղի ունեցաւ 1604 թուականին, Հայաստանից դէպի Իրանի խորքերը: Եռանդուն Ծահ-Աբրահը դերազանցեց իր նախորդներին. շուրջ 300 հազար հայ դուղացի եւ քաղաքացի, 20 հազարանոց Հին Զուղայի՝ Արաքսի ափի այդ ձենովայի, այլեւ Նախիջեւանի, Երեւանի եւ այլ քաղաքների ու տւանների հայ բնակիչներ, դաժանութեամբ ու մեծ կորուստներով, ջշուեցին Իրան: Հարիւրաւոր զիւղեր հրդեհուեցին ու ամայացան. հազարաւոր հայեր սպանուեցին, կամ հարեմ ընկան, հարիւրաւոր հայ մանուկներ, պատանիներ, սանձարձակ խաների եւ բեկերի կողմից առեւանդուեցին, դաւանափոխ արուեցին, թէեւ Ծահը ջանում էր անկորուստ փոխադրել նրանց Իրանի խորքերը, բայց այդ

դժուար էր անել այն պայմաններում եւ թշնամու շարժման միջոցին : Մինչդեռ, դրա նախորդ տարիներին բաղձաթիւ հայ մարդիկ՝ մեղքներ եւ զիւղապետեր Արեւելեան Հայաստանից, յատկապէս Սիւնիքից եւ Արցախ-Ղարաբաղից, հանրաճանաչ եւ Շահ-Աբրասի կողմից «Ծեր Առիւծ» մականունը ստացած Մելիք Հայկաղի գլխաւորութեամբ, դիմում էին նոյն վիպական դարձած Շահ-Աբրասին, որ գայ եւ իրենց ազատի դրանից շուրջ 15 տարի առաջ արդէ Անդրկովկասը յափշտակած օսմանեան Թուրքիայի լծից, որ անտանելի էր նրանց համար :

Բայց եւ այնպէս, երեք ու կէս դար առաջ տեղի ունեցած այս սրտաճմլիկ, դաժան արարքը խիստ բացասական, թշնամական ազդեցութիւն է թողել հայ պատմադրութեան եւ զբաղմունքեան վրայ, որից չեն ազատագրուել մինչեւ այժմ : Այդ ծանր պատկերները նկարագրելու, վերլուծելու հանգամանքը թոյլ չի տուել, որ պատմաբանները յոգնութիւն ունենան թերթելու նաեւ դրան յաջորդած փաստական էջերը : Այդ բռնապաշտը կատարուեց հզօր թուրքական արշաւանքները կասեցնելու նպատակով, ամայի տարածութիւն ստեղծելու նպատակով, միաժամանակ՝ առեւտրական ուղիները փոխելու եւ Իրանի կեդրոնը ծաղկեցնելու համար, եւ ոչ թէ հայ տարրը ոչնչացնելու նպատակով : Եւ այդ մեծ բռնապաշտից շատ չանցած, ինչպէս ինքը՝ Շահ-Աբրասը, այնպէս էլ նրա մերձաւոր զինակից, Երեւանի խանութեան բեգլերբեգ եւ նշանաւոր պետական գործիչ Ամիր Գունախանը լոկիւսյն հնարաւորութիւն ընձեռեցին տարադրութեան ենթարկուած հայ բնակչութեան մեծագոյն մասի վերադարձին հայրենիք՝ բացառութեամբ դուցէ ջուղայեցիներին : Աւելին, նրանք հող տարան (ինչպէս նաեւ Ամիր Գունախի որդու՝ Թահմազկուլի խանի օրօք) որպէսզի մի քանի հարիւր ամայացած հայկական գիւղերը արդէ վերաշինուեն, տնտեսապէս զօրանան եւ ունենան իրենց ներքին՝ հայեցի իրաւունքները, տանելի՝ տնտեսական, մշակութային, կրօնական կեանքով : Իրանի արքունիքը շատ շուտ զղաց, որ հաւատարիմ հայերով բնակուած Հայաստանը մաքրելով հայերից, ամայի տարածութիւն ստեղծելու նպատակով, ոչ թէ կանգնեցնում էր թուրքական արեւելեան արշաւանքների ճանապարհը, այլ ընդհակառակը, լեռնային դռները բաց էր անում նրանց առջեւ դէպի Կասպիականի հարաւարեւմտեան աւազանը : Սխալն ուղղուեց մեծ եռանդով եւ ամէն կարգի միջոցներով :

Զահուած 17-րդ դարի առաջին քսանամեակի եւ վերջին տասնամեակի մի քանի ծանր դէպքերը, 1620 թուականից մինչեւ 1695 թուականը, այսինքն 75 տարի, մամաւանդ միջին 50 տարին, Իրանի պետական սահմանների մէջ գտնուող Արեւելեան Հայաստանում տի-

րեց բացառիկ խաղաղութեան մի ժամանակաշրջան: Կէս դարի ընթացքում երկիրը ապրեց այնպիսի բնական ու ներգաղթի աճ եւ տնտեսական, մշակութային վերելք, որ կարելի է համարել մի նոր հայկական վերածնութիւն, մանաւանդ, որ հետուից հետու, այդ զուգադիպում էր եւրոպական ընդհանուր վերածնութեան շրջանին:

Մեր հաշիւներով, 1641-1666 թթ-ի քսանհինգամեակում, Արեւելեան Հայաստանում՝ Արցախ-Ղարաբաղից մինչեւ Ախուրեան, Արարատեան դաշտից մինչեւ Գողթան-Մեղրի, հարիւրաւոր վերաշինուած դիւղերում վերաշինուեց եւ վերստին կառուցուեց աւելի քան 500 եկեղեցի: Բարձրորակ քանդակներով կանգնեցին դրա հնդապատիկ քանակի խաչքարեր, շինուեցին տասնեակ կամուրջներ, վերաշինուեցին մի քանի տասնեակ վանքեր: Աւելի ուշագրաւ՝ մի քանի տասնեակ դիւղերում ստեղծուեցին մագաղաթի արհեստանոցներ եւ վանքերից դուրս այդ դիւղերում եւս զրուեցին, արտադրուեցին հազարաւոր չքնաղ, ծաղկազարդուած ձեռագրեր: Պոչոր վանքերը վերստացան իրենց կալուածքների մի մասը: Խմբիւթիւնը վերստացաւ իր համահայկական հոգեւոր կեդրոնի հեղինակաւոր դերը, հօրաքան հայ մելիքութիւնները: Արաղ թափով սկսեցին դարձանալ քաղաքային առեւտուրն ու արհեստները, համալսութիւնները, արհեստն ու դրականութիւնը, դպրոցներն ու գիտութիւնը: Ծիլչէ է, ցաւալի էր եւ մեծ կորուստ, Արաքսի եւ Գողթնի շուրթերին ծաղկած Զուղայի դատարկումը եւ ի սպառ ամալացումը, որի քանդակազարդ դերեղմանաքարերի անտառը պահպանուել է ցարդ Արաքսի ափին, բայց հազիւ թէ այդ վայրերում Հին Զուղան կարողանար շարունակել իր կեանքը եւ դառնար հեռաւոր Իսպահանի արուարձանում նոր կեանքի կոչուած, չքեղութեամբ ծաղկող եւ համաշխարհային անուն վաստակած Նոր Զուղայի հաւասարը: Բիրմայից, Տիրեթից մինչեւ Ամերիկա ոտք դնող նոր ջուղայեցին էր, որ 1639-1641 թթ. Ասիական մայր ցամաքը առաջին անգամ զարդարեց Գոտեմբերգի մեծ գիւտով, Նոր Զուղայում հիմնելով նաեւ ինքնաչէն հայկական տպարանը՝ հայկական տպագրութիւնից 130 տարի յետոյ:

Հին Զուղան աշխարհում չէր կարող հանդէս գալ պարսկական պետութեան անունից եւ օտար թաղաւորները հետ «Հայկական ընկերութեան» (Կոմպանիայի) կնիքով տնտեսական, նոյնիսկ քաղաքական պայմանադրեր կնքել, նաեւ ունենալ, հնդկական շուկաներին տիրանալ, ինչպէս այդ անում էր, Շահ-Աբրահամ եւ նրա յաջորդների ջանքերով, Իրանի մայրաքաղաք Իսպահանի արուարձանում ծաղկող Նոր Զուղան:

Այս եւ այլ շատ փաստեր վկայում են, որ հայ ժողովրդի պատ-

մութեան համար հայ-պարսկական յարաբերութիւններէ մէջ երկրորդ մեծ դժբախտութիւնը պէտք է համարել հայ եւ պարսիկ ժողովուրդների ամփոյշական աշխարհագրական դրացիութեան խախտումը, ամօքատումը, մի լայն տարածութեան վրայ: Այս տարածութեան վրայ, 11-րդ դարի երկրորդ կէսից սկսած հետզհետէ ամբացան թուրանական, թուրքմեն-աղբրեջանական, հետապայում եւ զրսից բերուած քուրդական ցեղերը, իրենց մէջ ձուլելով տեղում ապրող հին բնիկների մի զլալի մասին: Այս բնթացքը իր հիմնական յաղթանակին հասաւ 16-րդ դարում, իսկ աւարտին՝ 18-19-րդ դարերում:

Աւելին. պարս-իրանական ժողովրդի պետականութեան, քաղաքական աշխուժութեան եւ մանաւանդ ղեկավարման մեծ բաժինը հետզհետէ անցաւ թուրքմենական-աղբրեջանական ցեղապետերին: Իրանից յետոյ, դարձեալ Իրան-Պարսկաստան անուան տակ, Իրանի թուրանական ծագումի հարստութիւնների ժամանակ, ողջ հիւսիսային Իրանի թուրանական եւ Կովկասի մեծագոյն մասի ռազմավարչական մեքենայի դերակշիռ մասը եւ ռազմական ուժերը պատկանում էին թուրք-աղբրեջանցիներին:

Հայերի աղղային-կրօնական ճնշումները՝ հայ քրիստոնեաները՝ ժամանակագիրները վերագրել են պարսիկներին, որովհետեւ պետութիւնը իրանական էր: Նոյնիսկ նախանցեալ դարի եւ անցեալ դարի ռուս-պարսկական պատերազմները եւ հայկական աղատադրական ապստամբութիւններն ու մարտերը կոչուել եւ կոչուած են՝ «ռուս-պարսկական», «հայ-պարսկական»: Մինչդեռ, այդ դարաւոր այդ-քարի եւ հալածանքների մէջ հազիւ թէ կարելի լինի երկու ձեռքի մատները վրայ հաշուել պարսիկ անուններ: Եւ այդ այնքան ուժեղ հնչեց եւ քարացաւ հայ մտայնութեան մէջ, որ աւելի քան հարիւր տարի առաջ հանդէս եկած բանաստեղծ Պատկանեանը (Գամառ Բաթրայան) իր աղղային մշտի եւ զայրոյթի երգերում, իր «Մայր Արաքսի» ակերի վրայ մաղուց հեռացած պարսիկն էր տեսնում, որ անցեալ դարի 30-40-ական թթ. Արովեանը նոյնպէս պարսիկ է աւսում: Այդ երեւոյթի պատճառը այն էր, որ նախ պետութիւնը պարսկական էր (իրանական), եւ որ պարսիկ էին անուանում նրանց նաեւ կրօնական պատկանելիութեան հանգամանքով, որովհետեւ պարսկահայտակ թուրքերի, աղբրեջանցիների մեծագոյն մասը, պարսիկներին նման, չկա-մուսուլմաններ էին:

Անշուշտ թուրքական ծագումի իրանական հարստութիւնները՝ սեֆեան, ղենդեան, աֆշար, դաշար, բոլոր գծերով վարում էին զուտ իրանա-պարսկական քաղաքականութիւն, ուր իշխող պետական լեզուն եւս պարսիկէին էր: Սակայն չի կարելի անտեսել, որ պետական, ռազմական կեանքը, ռազմա-վարչական մեքենան զերազան-

ցօրէն դառնում էր Թուրքախօս ցեղապետերի, խաների, բեկերի եւ այլ եռանդուն, դործիմաց պաշտօնեաների ձեռքում :

Իրանի Հիւսիսային տիրոյթները, մանաւանդ Ատրպատականը եւ Անդրկովկասը, բացառութեամբ Արեւելեան Վրաստանի, դառնում էին ոչ միայն շատ յաճախ կեդրոնի դէմ ըմբոստացող եւ աւելի շատ ժառանգարար իշխող Թուրք խաների կամքին ենթակայ, նրանց ոտքերի տակ, այլեւ՝ զրեթէ ինքնակամ, բեկերի իշխանութեան տակ : Սրանց դռնաբուսներն էին, աւելի սանձարձակ, բազմաթիւ Թուրք եւ քուրդ զինուած քոչուոր տոհմերի անվերջ ու անպատասխանատու խռովութիւնները : Չէր օղնում նոյնիսկ երբեմն սրանց դէմ խաների կիրառած վարչական խիստ պատիժները : Ամբոն եւ աշնան ամիսներին լեռների վրայ իշխող հաղարաւոր ռազմիկ խմբեր, նոյնիսկ «պարապուրթիւնից հերոսութիւն խաղացող», ձրի վաստակի եւ Թրի ու ժով ուրիշի ամէն ինչը իւրացնելու սովոր, ասպատակում էին զիւղերն ու ամառանոցները, աւարի ենթարկում անզէն հայ զիւղացու ինչքը, անասունները, բռնութիւններ կատարում, աղջիկ առեւանդում եւ զրեթէ միշտ մնում անպատիժ : Դժուար էր նրանց դառնել եւ աւելի վտանգաւոր էր՝ հետապնդելը : Հոյուից մինչեւ բեկը եւ խանը անարդեւ կարող էին դիմել ամէն տեսակի եւ չափի կամայականութեան, մանաւանդ, եթէ դէմը կանգնած էր «անհաւատ քրիստոնեան», անզէն կեալուրը, երբ նման վարմունքից երբեմն ապահով էէր նաեւ իր ցեղակից, յատկապէս նստակեաց մահմետական զիւղացին :

Աւելի անտանելին, քան կողոպուտն ու ամէն կարգի ստորացումներն էին, այդ սովորական դարձած բռնի դաւանափոխութեան իրաւունքի կիրառումն էր, ինչպէս Թուրքիայում, այնպէս եւ Իրանի՝ մանաւանդ հայաբնակ Ժալրամասերում : Դիմադրողները, հարիւրներով, հազարներով, յատկապէս կանայք, նահատակուել, մարտիրոսացել են :

Որոչ չըջահայեաց, խաղաղասէր, շինարար պետական դործիչների՝ խաների, փաշաների, բեկերի կարգապահական խտրութիւնները, նրանց պայքարը չարադործութիւնների դէմ, մանաւանդ սակաւ հանդիպող խաղաղ պայմաններում, երջանկութիւն ու երջանիկ տարիներ եւ տասնամեակներ են համարուել հայ ժամանակագիրների կողմից :

Անհնարին էր օրեր ու շաբաթներ տեւող քոչերի շարժումներին հսկել նոյնիսկ ցերեկները : Օրէնքն ու կարգը ուժի եւ Թրի վրայ դրած այդ հազարներին ետ պահել ասպատակութիւններից, խռովութիւններից, ուղղակի անկարելի էր, մանաւանդ որ այդ նրանց կենցաղի աւանդական պարտադիր մասն էր : Շատ մեծ դժուարութեամբ, այն էլ որոչ չափով միայն, նրանց կարգի էին հրաւիրում ցարակոն՝

ռուսական վարչական իշխանութեան կիրառած օրինական խստութիւնները, 19-րդ դարում եւ 20-րդ դարի սկզբներին:

Հայաստանի արեւելեան՝ պարսկական մասում, յատկապէս լեռնային գաւառներում, հակառակ Թուրքիայի, հայերը իրաւունք ունէին ամէն տեսակի զէնք կրելու եւ մասամբ կարողանում էին պաշտպանուել փոքր յարձակումներից:

Ամբողջ հարկւրամեակներ այս պայմաններում է ապրել. ստեղծադրածել, նոյնիսկ դիտական եւ արուեստի նուաճումներ կատարել, եռապատիկ հարստահարուած հայ ժողովուրդը:

Եթէ հայ երկրագործի, վարպետի եւ վաճառականի պիտանի անհրաժեշտութիւնը չլինէր, անշուշտ շատ աւելի ծանր կը լինէր նրա դոյալիճակը: Ինչպէս նկատեցինք սկզբից՝ եթէ քաղաքում հանդուրժուած էր հայը, աւելի տուրք, հարկ եւ մաքս վճարելով, որ դրեթէ բացառապէս նրա վրայ էր կըթնած երկրի արտաքին առեւտուրը, ներքին առեւտրի մեծագոյն մասը, հայաբնակ մարզերի, վայրերի բոլոր կարեւոր արհեստները, երկրի ընդհանուր հարկերի զգալի մասը, բանակին սպասարկելը: Հարկերի մէջ ծանր էր նաեւ միայն հայերից (եւ հրեաներից) դանձուող հին ջիլդան (գլխահարկը) ու տեղ-տեղ հաւաքուող նաեւ հաւատի հարկը: Եթէ առաջինը թերեւս զինուոր չտալու հարկ կարելի է դիտել, ապա վերջինը՝ յաւելեալ ստորացում եւ կողոպուտ էր միայն:

Հայ գիւղը արտադրում էր այն բոլոր բարիքները, որոնք ընդ-վճարով պէտք էին ոչ միայն պետութեան եւ Ֆէոտալական բարձր աստիճանին կանգնած իշխողներին, այլեւ տասնեակ հազարաւոր քոչուոր ընտանիքների, որոնք կաթնեղէնից, մսից եւ բրդից բացի ոչինչ ունէին: Շատ քոչուոր-թարաքամաներ եւ քուրդ քոչուոր ցեղեր ու տոհմեր իրենց այդ բարիքները, քոչուորական արտադրանքները փոխանակում էին հացի եւ նստակեաց գիւղացիութեանը յատուկ այլ բարիքների հետ, որով աւելի էին զգում հայ գիւղացու դոյութեան անհրաժեշտութիւնը:

Այսպիսին է եղել հայ ժողովրդի դոյալիճակը մինչեւ 19-րդ դ., մինչեւ Հայաստանի միացումը Ռուսաստանին: Եւ եթէ հայ պատմադրութեան մէջ հիմնականում իրանական տիրապետութեան շրջաններում են փնտռել հայ ժողովրդի պատմութեան ճակատադրական մռայլ էջերը, ապա իրականում Հայաստանի մեծագոյն դժբախտութիւնը ռազմիկ քոչուոր ցեղերի թափանցումն է երկիր՝ ոչ միայն որպէս նուաճող, այլեւ որպէս հաստատուն բնակիչ ու հետզհետէ նստակեաց դերիշխող տարր:

IRANO-ARMENIAN RELATIONS

MOROUS HASRATIAN

(Summary)

The Armenians have lived for over two thousand years out of their history of three thousand years, fighting for their independence or under foreign domination. Of these foreign dominations the most durable and the most significant was that of Iran. This domination embraced rule of the Achamenian, Parthian, Sassanian and Sefavid dynasties. The Iranian rule was comparatively more benevolent than the rest. It has left its positive imprint and has contributed in the evolution of the Armenian people.

Inspired by her own political, strategic and financial considerations, Iran throughout her history has shown a friendly attitude towards Armenia and Armenian people.

In the centuries of Irano-Armenian relations a few significant events — such as the Vartanantz battle of 451 and the forced deportation of the Armenian people in 1604 by Shah-Abbas — have been painted with the darkest colors in Armenian historiography. This fact has cast its shadows on the objective evaluation of Irano-Armenian relations. A serious and scientific approach to study of the matter will bring us to a more positive conclusion concerning the period of Iranian domination of Armenia.

